ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «28» 01 2018թ. № 150-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 512-Ա ՀՐԱՄԱՆՈՎ «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ N Ն-01 ՎԿԱՅԱԿԱՆԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետը, «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի կողմից 2018 թվականի փետրվարի 13-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի հունիսի 6-ի ««ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի հունվարի 27-ի N 34-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 512-Ա հրամանով ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային տրամադրված

համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-01 նշանակման վկայականը վերաձևակերպել:

2. Հաստատել ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

3. «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-01 նշանակման վերաձևակերպված վկայականին կցել նաև սույն հրամանի հավելվածում նշված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 006/T-048) № 1/1-A և № 1/1-B Հավելվածներով սահմանված և հավատարմագրման ոլորտներում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

4. «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի նշանակման ժամկետ սահմանել մինչև 2021 թվականի մայիսի 23-ը:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություններ:

6. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված

ՀՀ տնտեսական զարգացման և

ներդրումների նախարարի 2018թ.

---------- ի N ----Ա հրամանի

ՑԱՆԿ

**ՀՀ տեխնիկական կանոնակարգեր**

1. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում - միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3402» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:

2. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1692-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3101 00 000» և «3102-3105» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:

**ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ**

1.«Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 040/2016) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ